

Կարևոր տեղեկատվություն հաճախորդների համար

1. Վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ եղանակով:
2. Վարկի տոկոսադրույքը միշտ հաշվարկվում է վարկի մայր գումարի մնացորդի վրա:
3. ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի և՛ մայր գումարը, և՛ տոկոսագումարը կարող են մարվել ԱՄՆ դոլարով:
4. Վարկի տրամադրման դեպքում վարկառուն վճարում է վարկի տրամադրման/կանխիկացման, իսկ որոշ վարկատեսակների դեպքում նաև վարկի սպասարկման վճար՝ «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից սահմանված չափով և կարգով (տե՛ս «Վարկավորման պայմանները» փաստաթուղթը յուրաքանչյուր վարկատեսակի էջում):
5. Վարկերի տրամադրման նվազագույն և առավելագույն սահմանաչափերն ու ժամկետները՝

Վարկատեսակ	Նվազագույն և առավելագույն սահմանաչափեր	Նվազագույն և առավելագույն ժամկետներ
Վարկ «Գյուղ թեթև»	75 000 – 500 000 ՀՀ դրամ	6 – 24 ամիս
Վարկ «Գյուղ Պարզ»	500 001 – 2 500 000 ՀՀ դրամ, 150 – 5 000 ԱՄՆ դոլար	6 – 36 ամիս
Վարկ «Գյուղ Պրոգրես»	2 500 001 – 10 000 000 ՀՀ դրամ 5 001 – 20 000 ԱՄՆ դոլար	6 – 60 ամիս
Վարկ «Ծրագրային ագրո»	2 500 000 – 48 000 000 ՀՀ դրամ	8 – 60 ամիս
Վարկ «Բերրի»	75 000 – 1 500 000 ՀՀ դրամ	6 – 12 ամիս
Վարկ «Բիզնես թեթև»	75 000 – 500 000 ՀՀ դրամ	6 – 24 ամիս
Վարկ «Բիզնես Պարզ»	500 001 – 2 500 000 ՀՀ դրամ, 150 – 5 000 ԱՄՆ դոլար	3 – 36 ամիս
Վարկ «Բիզնես Պրոգրես»	2 500 001 – 10 000 000 ՀՀ դրամ, 5 001 – 20 000 ԱՄՆ դոլար	3 – 60 ամիս



Վարկ «Բիզնես Գործընկեր»	20 001 – 150 000 ԱՄՆ դոլար	մինչև 84 ամիս
Վարկ «Սպառողական Թեթև»	75 000 – 500 000 ՀՀ դրամ	6 – 24 ամիս
Վարկ «Սպառողական Պարզ»	500 001 – 1 500 000 ՀՀ դրամ	12 – 36 ամիս
Վարկ «Սպառողական ԱՊՊԱ»	20 000 – 100 000 ՀՀ դրամ	1 – 9 ամիս
Վարկ «Սպառողական Ոսկի»	30 000 – 1 500 000 ՀՀ դրամ	Անուիտետային մարման եղանակ՝ 3-24 ամիս Բուլիտային մարման եղանակ՝ 6, 9 կամ 12 ամիս
Վարկ «Սոլար»	75 000 – 1 500 000 ՀՀ դրամ	6 – 60 ամիս
Վարկ «Սպառողական Պլյուս»	500 001 – 1 000 000 ՀՀ դրամ	6 – 36 ամիս

6. Ամսական մարումները կատարվում են հավասարաչափ մասնաբաժիններով, բացառությամբ՝ արտոնյալ ժամանակահատվածի մարումների և/կամ սեզոնային (ձկուն) գրաֆիկով նախատեսված մարումների:
7. Վարկերի տոկոսադրույքը, սպասարկման վճարը և այլ պայմանները փոփոխվում են «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Վարչության որոշմամբ, որի մասին հաճախորդները ծանուցվում են «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ բոլոր տարածքային ստորաբաժանումներում՝ այդ որոշումը տեսանելի վայրում փակցնելու, ինչպես նաև վարկատեսակի պայմանները սահմանող բուլլետների և ՖԻՆՔԱ-ի ինտերնետային կայքի միջոցով:
8. Վարկերի ապահովման միջոց հանդիսանում է գրավը և/կամ երաշխավորությունը: Որպես գրավի առարկա կարող են հանդիսանալ գույքի հետևյալ տեսակները՝ շրջանառու ապրանքներ, սարքավորումներ, ընտանի կենդանիներ, ավտոմեքենաներ կամ այլ շարժական գույք, անշարժ գույք:
9. Վարկառուն իր պայմանագրային պարտավորությունների կատարման համար նյութական պատասխանատվություն է կրում նաև սեփականության իրավունքով իրեն պատկանող ցանկացած այլ գույքով (տուն, բնակարան, ավտոմեքենա, աշխատավարձ և այլն), եթե առկա գրավի առարկան բավարար չէ «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի նկատմամբ ստանձնած իր պարտավորությունների ամբողջական և պատշաճ կատարման համար:
10. Վարկառուի կողմից մարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում պարտավորությունները չկատարելու դեպքում վարկառուն պարտավորվում է վարկատուին



վճարել տուժանք՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար ժամկետանց (չվճարված) վարկի գումարի նկատմամբ օրական 0.13%-ի չափով, և յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար ժամկետանց (չվճարված) տոկոսագումարի նկատմամբ օրական 0.13%-ի չափով:

Վարկառուի կողմից վարկային պայմանագրի մարման ժամանակացույցով սահմանված վարկի գումարի վճարման ժամկետները խախտելու (կետանցի) դեպքում վարկային պայմանագրով նախատեսված վարկի տարեկան տոկոսադրույքի հաշվարկումը ժամկետանց վարկի նկատմամբ դադարում է և վճարման ենթակա ժամկետանց վարկի գումարի նկատմամբ կետանցի օրվանից մինչև վճարման ենթակա ժամկետանց վարկի փաստացի մարման օրը, սկսում է հաշվարկվել տոկոս՝ տարեկան 24 տոկոս (քսանչորս) տոկոսադրույքի չափով:

Վարկառուի կողմից վարկի և տոկոսների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության և վճարված գումարների անբավարարության դեպքում, պարտավորությունները մարվում են հետևյալ հերթականությամբ՝ առաջին հերթին մարվում են պարտավորության կատարման ստացմանն ուղղված վարկատուի ծախսերը, այնուհետև սպասարկման վճարները, հաշվեգրված տույժերը, տոկոսները և վարկի գումարը:

11. Վարկառուն և երաշխավորը իրենց անձնական ամբողջ գույքով (տուն, մեքենա, աշխատավարձ կամ այլ գույք) հավասարապես պատասխանատվություն են կրում «ՖԻՆԲԱ» ՌԻՎԿ ՓԲԸ-ի առջև ստանձնած իրենց վարկային պարտավորությունների կատարման համար: Վարկառուի և/կամ երաշխավորի անձնական գույքը կարող է բռնագանձվել (առգրավվել) օրենքով սահմանված կարգով, եթե վարկառուն ժամանակին չի կատարում իր տոկոսագումարների, սպասարկման վճարների և վարկի գումարի մարումները:
12. Վարկառուի կողմից վարկի մայր գումարի, տոկոսագումարների և սպասարկման վճարների մարումները ժամանակին և պատշաճ չկատարելու դեպքում Վարկառուի և երաշխավորի մասին համապատասխան տեղեկատվությունը կգրանցվի «ԱՔՌԱ» Վարկային բյուրոյի ռեգիստրում:
13. Վարկառուն առանց տուժանք վճարելու իրավունք ունի վաղաժամկետ ամբողջական կամ մասնակի մարելու վարկը (բացառությամբ «Բիզնես Գործընկեր» վարկատեսակի)՝ վճարելով մարման օրվա դրությամբ հաշվարկված վարկի սպասարկման և այլ վճարները, տոկոսները և վարկը:
14. Վարկային հայտի վերաբերյալ կազմակերպությունը որոշում է կայացնում կախված վարկատեսակից 1 – 14 օրյա ժամկետում, տեղեկացնելով այդ մասին հայտ ներկայացնողին առավելագույնը 2 օրում,
15. Վարկ ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել «ՖԻՆԲԱ» ՌԻՎԿ ՓԲԸ Վարչության որոշմամբ սահմանված փաստաթղթերը, որոնք են.
 - հաճախորդի, երաշխավորի, գրավատուի (անհրաժեշտության դեպքում նաև նրանց ամուսինների) վավեր անձնագրերը և սոցքարտերը և ամուսնության վկայականները՝ ըստ պահանջի,
 - անհատ ձեռներեցի/իրավաբանական անձի գրանցման վկայականների պատճենները և ՀՎՀՀ-ն,
 - բիզնեսի վայրի նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող վկայականի կամ վարձակալության պայմանագրի պատճենները,



- այլ փաստաթղթեր՝ ըստ պահանջի:

16. Վարկի տրամադրման որական որոշման համար անհրաժեշտ գործոններն են՝ վարկառուն պետք է.

- Բավարարի առկա գործունեության վճարունակության գնահատման «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի ֆինանսական չափանիշներին:
- Ունենա բավարար վարկային պատմություն համապատասխան «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ կողմից սահմանված որակական չափանիշների;
- Համապատասխանի «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի ներքին իրավական ակտերով սահմանված այլ չափանիշներին:

17. «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն իրավասու է մերժել վարկի հայտը.

- Վարկառուի՝ 16-րդ կետում նշված պայմաններին չբավարարելու դեպքում,
- եթե վարկավորումը չի համապատասխանում «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի առաքելությանը,
- եթե հաճախորդը զբաղվում է «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ կողմից չֆինանսավորվող գործունեության տեսակներով (տե՛ս «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ կողմից չֆինանսավորվող գործունեության տեսակները» փաստաթուղթը «Մեր ծառայություններ» էջում),
- հաճախորդը ՖԻՆՔԱ-ում կամ այլ ֆինանսական կազմակերպություններում ունի և կամ ունեցել է վարկային պարտավորություններ, որոնք սպասարկվել են անթույլատրելի ուշացումներով և կամ խախտումներով, և հաճախորդը դիտարկվում է որպես անպարտաճանաչ վարկառու,
- վարկային կոմիտեի իրավասությամբ սահմանված այլ դեպքերում: